Պարոն/Տիկին _____ ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ.Մեսրոպյան _____

«12» Նոյեմբերի 2026թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝**
   - Մեսրոպ Մեսրոպյան,
   - Սերգեյ Աղինյան,
   - Գարիկ Չիլինգարյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - հանձնաժողովի նախագահ,
   - հանձնաժողովի անդամ,
   - հանձնաժողովի նախագահի խորհրդական,
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** 2026 թվականի հոկտեմբերի 25-26-ը, Հունաստանի Հանրապետություն, ք. Աթենք:
4. **Հրավիրող կողմը՝** Էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA) և Հունաստանի Էներգետիկայի, թափոնների և ջրի կարգավորող մարմին (RAAEY):
5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցություն ERRA-ի արտահերթ Գլխավոր ասամբլեայի (Ad Hoc General Assembly) տարեկան նիստին, ERRA-ի անդամ մարմինների նախագահների և անդամների բարձրաստիճան համաժողովին, ինչպես նաև եվրոպական և տարածաշրջանային կարգավորող մարմինների ղեկավարների հետ երկկողմ ու բազմակողմ աշխատանքային հանդիպումների անցկացում:

6. Քննարկված թեմաները՝

Համաժողովի աշխատանքները բաժանված են եղել 4 հիմնական աշխատանքային նիստերի և Գլխավոր ասամբլեայի պաշտոնական մասի.

I) Ad Hoc Գլխավոր Ասամբլեայի պաշտոնական որոշումներ և կազմակերպչական հարցեր

- **Նոր անդամի ընդունում.** Գլխավոր ասամբլեան միաձայն (25 կողմ ձայնով) հաստատեց Պակիստանի Սինդ նահանգի էլեկտրաէներգետիկայի կարգավորող մարմնի (SEPRA) ասոցացված անդամակցության հայտը:
- **Անդամավճարների կառուցվածքի բարեփոխում (2027-2030թթ.).** Քննարկվեց և 24 «կողմ» ձայնով ընդունվեց ERRA-ի ֆինանսական կայունության ռազմավարական որոշումը: Նպատակն է աստիճանաբար անցում կատարել ասոցիացիայի ֆիքսված ծախսերի ծածկմանը անդամավճարների հաշվին (հասցնելով 85%-ի 2030թ.)՝ նվազեցնելով կախվածությունը դասընթացների տատանողական եկամուտներից:
    - *Լիիրավ անդամների համար.* 2027թ.՝ 6,000 Եվրո, 2028թ.՝ 7,000 Եվրո, 2029թ.՝ 8,000 Եվրո, 2030թ.՝ 9,000 Եվրո:
    - *Ասոցացված անդամների համար.* 2027թ.՝ 4,500 Եվրո, 2028թ.՝ 5,500 Եվրո, 2029թ.՝ 6,500 Եվրո, 2030թ.՝ 7,000 Եվրո:
- **2027թ. աշխատանքային ծրագիր և բյուջե.** Հաստատվեց 2027 թվականի 631,000 Եվրո ընդհանուր բյուջեն և աշխատանքային ծրագիրը: Հայտարարվեց, որ 2027թ. փետրվարի 1-3-ը Սաուդյան Արաբիայի Ալ-Ռիադ քաղաքում կանցկացվի ERRA-ի 24-րդ տարեկան համաժողովը՝ «Վերահսկողությունից դեպի կանխատեսում. էլեկտրաէներգետիկ ոլորտի վերափոխման գործընթացում կարգավորողի նախաձեռնողական դերը» (From Oversight to Foresight: The Proactive Regulator in the Electricity Transformation) խորագրով:

II) Նիստ 1. 2026թ. Գործունեության ամփոփում և կարգավորման անկախություն

- Ներկայացվեցին ERRA-ի մշտական հանձնաժողովների 2026թ. հաշվետվությունները և կարգավորող մարմինների անկախության գնահատման «Gilardi Index» կոչվող մեթոդաբանությունը:

III) Նիստ 2. Գործնական կարգավորող օրինակներ

- **Լատվիա (PUC).** Ցանցին միացման ճկուն ծառայությունների ներդրման փորձը:
- **Հունգարիա (MEKH).** Արհեստական բանականության (AI) կիրառումը կարգավորող մարմնի աշխատանքներում և վերլուծություններում:
- **Թաիլանդ (ERC).** «Հավասարը հավասարին (P2P) առևտուրը՝ միասնական գնորդի մոդելի շրջանակում»:

IV) Նիստ 3. Հորմուզի շոկը և էներգակիրների գները (ՄԷԳ-ի զեկույց)

Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) ավագ վերլուծաբան Ֆրեդերիկ Ռիտերը ներկայացրեց Հորմուզի նեղուցի ճգնաժամի ազդեցությունը գազի համաշխարհային շուկայի վրա.

- **Գնային շոկ.** Հորմուզի նեղուցով հեղուկացված բնական գազի (LNG) մատակարարումների խափանումների հետևանքով գազի միջազգային գնային ինդեքսները (TTF, Asia Spot LNG) հասել են վերջին 3 տարվա առավելագույն ցուցանիշներին (մոտ 30 USD/Mbtu):
- **Առաջարկի կորուստ.** 2026թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համաշխարհային LNG առաջարկը նվազել է 6.5 մլրդ խմ-ով (1.5%): 2026-2030թթ. կանխատեսվում է 160 մլրդ խմ համախառն LNG առաջարկի կորուստ, ինչը շուկայի կայունացումը հետ է մղում շուրջ 2 տարով:
- **Եվրոպական պահեստարաններ.** Եվրոմիության գազի ստորգետնյա պահեստարանները ձմեռային շրջան են մտնում վերջին 10 տարվա ամենացածր լցվածության մակարդակով (<80%):
- **Ազդեցությունը էլեկտրաէներգիայի շուկայի վրա.** Էլեկտրաէներգիայի ֆյուչերսային գները կտրուկ աճել են այն երկրներում, որտեղ գազով աշխատող կայանները հանդիսանում են գնագոյացումը որոշող սահմանային (marginal) արտադրող (Իտալիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա):

- **ՄԷԳ առաջարկությունները.** Գազային պահուստների և ճկունության ապահովում, LNG սվոպների լայն կիրառում, պայմանագրային ճկունություն, ինչպես նաև Ուկրաինայի գազի պահեստարանների (31 մլրդ խմ աշխատանքային ծավալ) օգտագործում որպես տարածաշրջանային ռազմավարական պաշար:

V) Նիստ 4. Էներգիայի կուտակիչների կարգավորումը

- **Optima Energy Consulting-ի և ERRA-ի համատեղ ուսումնասիրություն.**
  - Ներկայացվեց էներգիայի կուտակիչների գնագոյացման և փոխհատուցման միջազգային փորձը (Իռլանդիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Թուրքիա, Ճապոնիա, Ավստրալիա):
  - Հիմնական խոչընդոտներն են՝ ցանցին միացման հերթերը և եկամուտների տատանողականությունը:
  - Հիմնական դասերը՝ կուտակիչների սահմանումը որպես առանձին ակտիվի դաս, «կրկնակի ցանցային վճարների» վերացում, տարբեր ծառայությունների մատուցման միջոցով եկամուտների համակցված ձևավորում (Multi-service revenue stacking) և երկարաժամկետ CfD/Cap-and-Floor աճուրդային մեխանիզմների կիրառում:

- **Թուրքիայի փորձը (EMRA).**
  - Թուրքիան սահմանել է ռազմավարական նպատակ՝ 2035թ. հասնել 120 ԳՎտ հողմային և արևային հզորության:
  - 2022թ.-ից ներդրվել է խթանման յուրահատուկ մոդել. 1 ՄՎտժ մարտկոցային կուտակիչ տեղադրող ներդրողն ստանում է 1 ՄՎտ հողմային կամ արևային կայան կառուցելու ուղղակի լիցենզիայի իրավունք (առանց մրցույթի): Հատկացվել է 33 ԳՎտ լիցենզիոն հզորություն:
  - 2027թ. հունվարի 1-ից կուտակիչների համար հավասարակշռման շուկայում հաշվարկային պարբերությունը 1 ժամից դառնում է 15 րոպե, իսկ հաճախականության կարգավորման աճուրդները՝ D-2-ից D-1 (ժամային հայտերով):

- **Հունաստանի փորձը (RAAEY).**

  - Ազգային պլանով (NECP) նախատեսվում է մինչև 2030թ. ունենալ 4.3 ԳՎտ մարտկոցային (BESS) և 2.9 ԳՎտ պոմպակայանային (PHS) կուտակիչներ:
  - RAAEY-ն կազմակերպել է 3 հաջողված աճուրդ՝ 900 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Ներդրողներին տրամադրվում է կապիտալ ծախսերի սուբսիդիա (100-200 հազ. Եվրո/ՄՎտ) և 10 տարվա երկկողմանի CfD պայմանագիր: Բարձր մրցակցության շնորհիվ աճուրդային գները սահմանային գնից նվազել են ավելի քան 57%-ով:
  - Հստակեցված է հարկային դրույքաչափը. լիցքավորման համար սպառված էլեկտրաէներգիան ազատված է տարատեսակ վճարներից, իսկ պարպման (discharging) ժամանակ ցանցային սակագներ չեն կիրառվում:

7. Հանդիպումները, ելույթները՝ Գործուղման ընթացքում տեղի են ունեցել մի շարք երկկողմ աշխատանքային հանդիպումներ՝

- **Հունաստանի կարգավորող մարմնի (RAAEY) Նախագահ, պրոֆ. Կոնստանտինոս Ցիմարասի հետ.** Քննարկվեցին երկկողմ համագործակցության հեռանկարները հատկապես՝ երկու կարգավորող մարմինների միջև վերջերս ստորագրված համագործակցության հուշագրի համատեքստում: Մասնավորապես, կողմերը քննարկեցին ԵՄ Թվինինգ գործիքի օգտագործման հնարավորությունը Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, եվրոպական կարգավորող մարմինների (մասնավորապես Հունաստանի կարգավորող մարմնի) փորձի փոխանցմանը և ոռոգման ջրամատակարարման ծառայությունների արդյունավետ, թափանցիկ ու կանխատեսելի կարգավորման համակարգի ձևավորմանը:
- **Հունգարիայի կարգավորող մարմնի ներկայացուցիչների հետ.** Հունգարական կողմի հետ շոշափվել են երկու կարգավորող մարմինների միջև համագործակցության ձևաչափերը «ԵՄ էներգետիկայի համար» նախագծի շրջանակներում: Քննարկվեցին հայ փորձագետների Բուդապեշտ կատարած այցի

արդյունքները, ինչպես նաև Հունգարիայի էներգետիկայի և կոմունալ ծառայությունների կարգավորող մարմնի փորձագետների՝ Երևան կատարելիք այցի նախապատրաստական աշխատանքները: Հայկական կողմը շնորհակալություն հայտնեց փոխշահավետ համագործակցության համար ERRA-ի փոխնախագահ, Հունգարիայի էներգետիկայի և կոմունալ ծառայությունների կարգավորման մարմնի (MEKH) ռազմավարական և միջազգային հարաբերությունների գծով փոխնախագահ պարոն Պալ Սագվարիին՝ MEKH-ում նրա պաշտոնավարման ժամկետի ավարտի և, համապատասխանաբար, ERRA-ի փոխնախագահի պաշտոնից հրաժարականի կապակցությամբ: Միաժամանակ, հայկական կողմին ներկայացվեց Հունգարիայի էներգետիկայի և կոմունալ ծառայությունների կարգավորման մարմնի ռազմավարական և միջազգային հարաբերությունների նոր փոխնախագահ Յանոշ Հիդիին, որի հետ քննարկվեցին համագործակցության արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝

- **ERRA-ի շրջանակներում.** Հաստատվել են ERRA-ի առաջիկա 2027-2030թթ. անդամավճարների նոր դրույքաչափերը, 2027թ. աշխատանքային ծրագիրն ու բյուջեն, ինչպես նաև SEPRA-ի (Պակիստան) անդամակցությունը:
- **ՀՀ ՀԾԿՀ հետագա քայլերի վերաբերյալ առաջարկություններ.**

– **Էներգիայի կուտակիչների օրենսդրական դաշտ.** Ուսումնասիրել Optima Energy Consulting ընկերության և ERRA-ի համատեղ ուսումնասիրությունը՝ հատկապես հիմնական դասերը,այդ թվում՝ կուտակիչների սահմանումը որպես առանձին ակտիվի դաս, «կրկնակի ցանցային վճարների» բացառումը, տարբեր ծառայությունների մատուցման միջոցով եկամուտների համակցված ձևավորում (Multi-service revenue stacking) և երկարաժամկետ CfD/Cap-and-Floor աճուրդային մեխանիզմների կիրառում:

– **Հիբրիդացման խթանում.** Ուսումնասիրել թուրքական փորձը արևային կայանների հետ կուտակիչների համատեղման (colocation) խրախուսման աճուրդային/լիցենզիոն մեխանիզմները:

– **Հավասարակշռման շուկայի ճկունություն.** Ուսումնասիրել թուրքական փորձը, այն է՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխումների շրջանակում դիտարկել հավասարակշռման շուկայում հաշվարկային պարբերության աստիճանական անցումը ավելի կարճ ինտերվալների, ինչը կբարձրացնի կուտակիչների և ճկուն հզորությունների մասնակցության տնտեսական արդյունավետությունը:

Գործուղվող ---------- ***Մ. Մեսրոպյան***

(սփորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- ***Ս. Աղինյան***

(սփորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- ***Գ. Չիլինգարյան***

(սփորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 827-Հ, 03.09.2026թ և Հրաման 977-Հ, 14.10.2026թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահ՝ **Մեսրոպ Մեսրոպյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սերգեյ Աղինյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահի խորհրդական՝ **Գարիկ Չիլինգարյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Աթենք /Հունաստան/**

5. Գործուղման ժամկետները **Օրապահիկ՝ 25.10.2026-27.10.2026 թթ., Գիշերավարձ՝ 25.10.2026-28.10.2026թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Մեսրոպ Մեսրոպյան	Սերգեյ Աղինյան	Գարիկ Չիլինգարյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)				-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	225,004	225,004	225,004	675.012
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (եվրո՝)	165	165	165	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը	3	3	3	
	Ընդամենը (դրամ)	213,015	212,148	204,986.5	630.150
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (եվրո)	61	61	61	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	25,795	25,795	25,795	
	Օրերի քանակը	3	3	3	
	Ընդամենը (դրամ)	77,385	77,385	77,385	232.155
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				-
	Այլ ծախսեր *(նկարագրել)*				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		515,404	514,537	507,376	1,537.317

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ **05.11.2026թ.**